

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գ ի տ ա կ ա ն հ ա ն դ ե ս

(Հատուկ թողարկում)

**ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

Մ Ա Ս 2

**Պետական կառավարման արդյունավետության
ապահովման հիմնախնդիրները Հայաստանի
Հանրապետությունում**

**27-28 մարտի
2014 թ.**

ՋՈՒԼԻԵՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ղեկավարների աշխատանքի արդյունավետություն
չորհանրակարգի գործընթացը..... 214

ԱՐԱՔՍՅԱ ԴԱԿՈՅԱՆ

Աշխատանքային ընտրությունները գործընթացում սոցիալական
կարծրասեղանի եւ դիրքորոշումների առանձնահատկությունները..... 220

ՄԱՐԻՆԵ ԶԱՐՈՅԱՆ

Ղեկավարների եւ ենթակայների միջեւ շփոթաբեր
չարդարացումը շարունակելու համարվող շարունակական շարունակական..... 225

ՍԻՐԱՐՓԻ ԹԱԹՈՅԱՆ

Վերականգնողական գործընթացում շարժերի շարժումներ
մեթոդների հիմնարկում շարունակականությունները..... 230

ՆԱՐԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կրթականության շարունակական հիմնարկում կարգավորման
չորհանրակարգի մեջ..... 235

ՀԱՍՄԻԿ ԿԵՍՈՅԱՆ

Կին ղեկավարի առանձնահատկությունները առանձնահատկությունները
աշխատանքի շարժումները եւ ենթակայները..... 240

ՆՈՐԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Անձի հնարավորությունները եւ ղեկավարման ուժի
փոխակարգի շարունակականությունները..... 245

ՇՈՒՇԱՆ ԴԱՐԱԽԱՆՅԱՆ

Կարգավորման եւ արդյունքի ներդրումը ընտրություններում
առանձնահատկությունները ոչ շարունակական կարգավորումներում..... 250

ՄԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բանավորների առանձնահատկությունները եւ դրանց կարգավորման
առանձնահատկությունները կարգավորումներում..... 256

ԳԱՅԱՆԵ ՄԱՐՏԻՐՈՅԱՆ

Կորոնավիրուսի հնարավորությունները դերը արդյունավետ
կարգավորման մեջ..... 262

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կարգավորման արդյունավետությունները շարունակական
գեներացիան առանձնահատկություններում..... 269

ԳՈՎԱՐ ՄԿՐՏՅԱՆ

Կարգավորման մասնակցի եւ ժամանակակից մոտեցումները..... 274

ԳԱՅԱՆԵ ՊԱՊՈՅԱՆ

Կարգավորման գործունեությունները Վերականգնողական
Լարված շարունակականություններում..... 284

ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Մասնագիտական շարունակական հիմնարկում..... 289

ՆԱՐԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*Երևանի պետական
համալսարանի մագիստրանտ*

**ԿՐԵԱՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հոգվածում ներկայացվում են կառավարման ոլորտում կրեատիվության դրսևորման առանձնահատկությունները՝ մենեջերների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Նշվում է, որ կրեատիվությունն ուղիղ համեմատական է ռիսկի հակվածությանը և նպաստում է տարբեր կարծրատիպերի հաղթահարելուն: Կառավարման արդյունավետության բարձրացումը պայմանավորված է անձի հոգեբանական առանձնահատկություններով: Դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հիմնավորել կրեատիվության կարևորությունը կառավարման ոլորտում:

Հիմնաբառեր. կրեատիվություն, ստեղծագործական մտածողություն, ռիսկ, արդյունավետ գործունեություն, մրցունակություն, զարգացում, հաղորդակցություն:

Ներկայումս ապրում ենք այնպիսի դարաշրջանում, որտեղ գիտությունը մեծ արագությամբ է զարգանում և մարդու մտքի թռիչքը որսալ գրեթե անհնարին է:

Նորարարությունների դարաշրջանում, անհնար է տարբեր ուղղություններում՝ այդ թվում կառավարման ոլորտում, կատարել այնպիսի աշխատանք, որը երկար ժամանակ պահանջարկ կունենա և կլինի անգերազանցելի: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտություն է առաջանում կառավարիչներին, մենեջերներին և կառավարման ոլորտի այլ անձանց, ցուցաբերել ստեղծագործական, կրեատիվ մոտեցում կառավարչական գործունեության ընթացքում, ինչն ապահովվում է մարդկության առաջընթացը և կյանքի լուծման ուղիների բազմազանությունը:

Ուսումնասիրվող հիմնահարցի հետազոտության ենթատեքստում անհրաժեշտ է նոր տեսական և մեթոդական դիրքերից ներկայացնել կառավարման հոգեբանական կառուցակարգերը, մասնավորապես՝ ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից դիտարկել կառավարիչների անձնային որակները, որտեղ առանցքային նշանակություն ունի կրեատիվ մտածողությունը: Վերջին 5-7 տարվա ընթացքում կառավարման հոգեբանությունն ակտիվ ուսումնասիրվում է նաև Հայաստանում: Կառավարման և աշխատանքի հոգեբանության արդիական հիմնախնդիրներն ուսումնասիրվում են Հ. Ավանեսյանի, Ռ. Աղու-

զումցյանի, Դ. Հայրապետյանի, Տ. Գևորգյանի, Դ. Ամիրյանի և այլ հոգեբանների աշխատանքներում:

Հայտնի է, որ ստեղծագործական մտածողությունն ազդում է անձի գործունեության, արժեքային կողմնորոշիչների, աշխարհայացքի ձևավորման վրա, ինչն իր միջնորդավորված հետքն է թողնում այն ոլորտի վրա, որը կառավարվում է նրա կողմից: Կառավարման գործընթացը բազմաբնույթ է ու բազմագործառույթ, և այն անմիջականորեն ազդում է մենեջերի անձնային որակների ձևավորման վրա: Մենեջերի արհեստավարժ կարևոր որակները դիտարկվում են 3 մակարդակով՝ գործունեության ծավալման, վարքի դրսևորման և անձի որակների ձևավորման մակարդակում: Կառավարելու կարողությունը մի շարք հոգեբանական առանձնահատկությունների դրսևորման արդյունք է:

Մենք հակված ենք այն մտքին, որ կառավարչական գործունեությունում և ընդհանրապես մենեջերի նորարար ու արդյունավետ գործունեության հիմքում ընկած է նրա իմացական որակները, մասնավորապես՝ կրեատիվ մտածողությունը:

Ներկայումս, կազմակերպության ներսում մարդկային ներուժի ակտիվացումը դառել է ցանկացած կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացման նախապայմանը, ինչը մեծապես կախված է մարդու անձնային հոգեբանական առանձնահատկություններից: Իսկ կառավարման ավանդական ձևաչափը ճնշում է կառավարիչի իմացական հնարավորությունները, ստեղծարար մոտեցումն աշխատանքի նկատմամբ [1]:

Կառավարման գործունեությունը հասարակական կազմակերպությունների կազմակերպվածության կարևորագույն բաղադրատարրերից է [2]: Հասկանալու համար կրեատիվության և կառավարման կապը, նախ դիտարկենք կրեատիվություն տերմինը, տանք դրա սահմանումը:

Կրեատիվությունը մարդու ընդունակությունն է ստեղծել, ծնել, գտնել ինքնատիպ լուծումներ, շեղվելու ավանդական մտածողությունից: Կ. Ռոջերսը կրեատիվությունը բնութագրում է որպես խնդրի յուրօրինակ լուծումներ գտնելու ընդունակություն: Կրեատիվության վերաբերյալ չկան ընդհանուր մոտեցումներ: Որոշ դեպքերում այն համարվում է նաև օժտվածություն, քանի որ, ոչ բոլոր մարդիկ են ընդունակ կրեատիվ լուծումներ, որոշումներ կայացնել [3]: Հայտնի ամերիկացի հետազոտող Հ. Գեյվինը գրում է, որ կրեատիվության ներքո հասկացվում է արժեքավոր արդյունքների ստացում՝ ոչ ստանդարտ միջոցներով: Ստեղծարար մարդիկ ոչ միայն կատարում են ինքնատիպ քայլեր, այլև՝ նրանց վարքը նպատակաուղղված է և օգտակար [3, էջ 159]:

Եթե վերադառնանք պատմությանը և ուսումնասիրենք կառավարիչներին բնորոշ հոգեբանական առանձնահատկությունները, ապա կտեսնենք, որ կառավարիչները տարբերվել են իրենց խիզախությամբ, անվախությամբ, իսկ հոգեբանության տեսանկյունից դրան կարող ենք անվանել՝ համարձակություն/ռիսկի հակվածություն:

Մենք համաձայն ենք այն մտքին, որ ռիսկի հակվածությունն ուղիղ կապ ունի կրեատիվության հետ: Մարդիկ միշտ վախենում են նորից, նորամուծություններից, քանի որ յուրաքանչյուր նոր բան իր մեջ որոշակի անորոշություն է պարունակում: Քանի որ կրեատիվ կառավարիչները չեն վախենում նորույթից և շրջապատող մարդկանց հակազդեցությունից, կարելի է ասել, որ նրանք մասնակիորեն ունեն նաև ռիսկի հակվածություն, ինչն արդյունավետ կառավարման կետերից մեկն է համարվում:

Տվյալ վարկածը հաստատվել է հետազոտությամբ, որն անցկացվել է Երևանի մի շարք զբոսաշրջային գործակալություններում: Հետազոտության ընթացքում չափվել են թոփ-կառավարիչների կրեատիվության և ռիսկի հակվածության մակարդակը: Հետազոտությունը ցույց է տվել, որ այն մենեջերները, որոնք ունեն կրեատիվության բարձր մակարդակ, ունեն նաև՝ ռիսկի բարձր հակվածություն: Այսինքն՝ կրեատիվությունն ուղիղ համեմատական է ռիսկի հակվածությանը:

Կրեատիվությունը հոգեբանական տեսանկյունից դիտարկվում է որպես կարծրատիպերի կազմալուծում: Դա շատ է գնահատվում տարբեր մասնագիտություններում: Կրեատիվությունը հրատապ է դարձել այնքանով, որ կյանքը մեծ արագությամբ առաջ է ընթանում և նրա հետ զուգահեռ քայլելու համար պետք է ճկուն մտածողություն ունենալ [4]:

Սկզբնական շրջանում, մենեջերների կրեատիվությունը կապվում էր իրենց արհեստավարժ գործունեության ոլորտի հետ: Օրինակ՝ որոշ մասնագետներ կարծում են, որ գովազդատուներն ավելի կրեատիվ են, քան տնտեսագետները: Սակայն արտասահմանյան մասնագետների հետազոտություններն ապացուցեցին, որ մենեջերի կրեատիվությունը կապ չունի այն ոլորտի հետ, որտեղ նա աշխատում է: Կրեատիվությունը ներքին առանձնահատկություն է: Ժամանակակից կազմակերպություններում նախընտրություն է տրվում այն մենեջերներին, ովքեր կարողանում են համակցել կրեատիվությունը, հաղորդակցականությունը, մարդասիրությունը և մասնագիտական գիտելիքները [5]:

Այսպիսի մոտեցումը թույլ է տալիս լինել միշտ մրցունակ, և նաև՝ առաջ անցնել մրցակիցներից: Մենեջերը հասկանում է, որ ցանկացած նոր միտք, ապրանք կամ առաջարկ մի օր հնանում է: Այդ իսկ պատճառով, նա միշտ մեկ քայլ առաջ է նայում՝ ընդունելով ոչ ստանդարտ որո-

շումներ, որոնք կարող են պահել տվյալ կազմակերպությանը առաջատար դիրքերում:

Ընդունված է, որ կրեատիվ մարդիկ հիմնականում օժտված են խարիզմայով: Դա օգնում է նոր որոշումներ կայացնելիս աշխատակազմին տանել իրենց հետևից: Կրեատիվությունը, ինչպես անձնային ցանկացած որակ, կարելի է զարգացնել և ընդարձակել: Մենեջմենտում կրեատիվության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է առաջին հերթին բարենպաստ հոգեբանական մթնոլորտ: Շատ կարևոր է ապահովել մենեջերների մասնագիտական գիտելիքների, հմտությունների շարունակական զարգացումը, որոնք նպաստում են մասնագիտական ոլորտում նրանց ինքնափրացմանը:

Այսպիսով, հիմք ընդունելով կառավարման ոլորտում ընդունված ժամանակակից պահանջները, չափանիշները, մենք կարծում ենք, որ արդյունավետ կառավարման և համապատասխան ոլորտի զարգացման համար նպատակահարմար է, որ կառավարման ոլորտում գործունեություն ծավալեն ստեղծարար մտածողություն ունեցող կառավարիչներ, ղեկավարներ և մենեջերներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **В. А. Розанова**, Психология управления, Учебное пособие, Москва, 1999, с. 95.
2. **А. В. Карпов**, Психология менеджмента: Учеб. пособие. — М.: Гардарики, 2005. — 584 с. - 11с.
3. **Е. П. Ильин**, «Психология творчества, креативности, одаренности», 158 с.
4. <http://www.klubok.net/article2017.html>- **Любовь Цой**, ст. н. Сотр., Института социологии РАН, канд. соц. наук, чл. - корр. РАЕН научный консультант проекта "Конфликтменеджмент в управленческом консультировании"
5. <http://www.creativeconomy.ru/articles/2543/>-Креативный менеджмент.

НАРЕ КАРАПЕТЯН

*Магистрант Ереванского
государственного университета*

ПРОБЛЕМА КРЕАТИВНОСТИ В ПСИХОЛОГИИ МЕНЕДЖМЕНТА

В данной статье раскрыты особенности креативности в сфере управления с точки зрения повышения эффективности деятельности менеджеров. Отмечается, что креативность напрямую зависит от предрасположенности к риску и способствует преодолению разных стереотипов. Повышения эффективности управления определяется психологическими особенностями личности. Изучение этих особенностей позволяет обосновать важность креативности в сфере управления.

Ключевые слова: креативность, творческое мышление, риск, эффективная деятельность, конкурентоспособность, развитие, коммуникация.

NARE KARAPETYAN

*Master's Program Student
of the Yerevan State University*

THE PROBLEM OF CREATIVITY IN MANAGEMENT PSYCHOLOGY

This article reveals the peculiarities of creativity in the sphere of management from the approach of increasing effectiveness of the management activities. It emphasizes that creativity is directly conditioned by the psychological peculiarities of a person. Study of these peculiarities allows us to substantiate the importance of creativity in the sphere of management.

Keywords: creativity, creative thinking, risk, effective activity, competitiveness, development, communication.